ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 30 ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

1. Երերույքի տաճար (Անի համայնք, գ.Անիպեմզա)
2. Հառիճավանք (գ.Հառիճ)
3. «Արփի լիճ» ազգային պարկ (Արփի համայնք)
4. Սառնաղբյուրի աղբյուրներ , Թադևոս Առաքյալ եկեղեցի, Սուրբ Հակոբ վանք (Անի համայնք)
5. Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան (Մարմաշեն համայնք, գ.Ջաջուռ)
6. Լմբատավանք (Արթիկ համայնք)
7. Ծակ քար (գ.Պեմզաշեն)
8. Մարմաշենի վանք (Մարմաշեն համայնք)
9. Մաքսիմ Գորկու Անվան Կենտրոնական Այգի (ք.Գյումրի)
10. Կրասարի եռաթռիչք կամուրջ (Աշոցք համայնք, գ.Կրասար)
11. Աշոցքում անցկացվող դահուկային փառատոն
12. Արագած լեռը, որպես ձմեռային տուրիզմի և լեռնագնացության զարգացման վայր
13. Ջրափի Քարավանատուն
14. Արքայաբլուր ամրոց (գ.Գուսանագյուղ)
15. «Կուլիանի» երկրագիտական թանգարան (գ.Սպանդարյան)
16. Սև Բերդ (ք.Գյումրի)
17. Պայտաձև ամրոց (ք.Գյումրի)
18. Սբ. Նշան եկեղեցի (ք.Գյումրի)
19. Ամենափրկիչ եկեղեցի(ք.Գյումրի)
20. Սուրբ Աստվածածին(Սուրբ Յոթ Վերք) եկեղեցի (ք.Գյումրի)
21. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
22. Ռուսական եկեղեցի (Պլպլան Ժամ,ք. Գյումրի)
23. Հովհաննես Շիրազի տուն-թանգարան (ք.Գյումրի)
24. Ասլամազյան քույրերի պատկերասրահ (ք.Գյումրի)
25. Քաղաքային կենցաղի և ազգային ճարատարապետության թանգարան (Ձիթողցոնց տուն-թանգարան, ք.Գյումրի)
26. Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան (ք.Գյումրի)
27. Միհեր Մկրտչյանի հուշատուն-թանգարան (ք.Գյումրի)
28. Չերքեզի ձոր (ք.Գյումրի)
29. «Կումայրի» պատմական արգելոց(ք.Գյումրի)
30. Խեցեգործության դպրոց (ք.Գյումրի)

1. **Երերույքի տաճար**: Եռանավ բազիլիկ տիպին պատկանող հայկական քրիստոնեական եկեղեցի ՀՀ Շիրակի մարզում՝ Անիպեմզա գյուղի մոտ՝ Ախուրյան գետի ձախ ափին: Երերույքի տաճարը հիմնվել է քրիստոնեական վաղ շրջանում՝ 4-5-րդ դարերում՝ հեթանոսական մեհյանի տեղում: Այն կառուցված է Անիի բաց նարնջագույն տուֆից: Պահպանվել է կիսավեր վիճակում: Երերույք անվանումն առաջացել է մատաղ անելու հեթանոսությունից մնացած սովորությունից: Իր տեսակի մեջ համարվում է Հայաստանի հնագույն եկեղեցիներից մեկը:

2. **Հառիճավանք**: Հառիճավանք (նախկինում նաև՝ Ղփչաղավանք), միջնադարյան եկեղեցական համալիր Հայաստանում: Այն հնագույն միջնադարյան հայկական վանքերից է: Ամենահին շինությունը 7-րդ դարում կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին է: Նրան կից կան 13-րդ դարում կառուցված երկհարկանի աղոթարաններ: Վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել է Զաքարե և Իվանե եղբայրների հրամանով 1201 թվականին, այն խաչաձև գմբեթավոր մեծաչափ կառույց է:

3. «**Արփի լիճ**» **ազգային պարկ**: Ստեղծվել է 2009 թվականին: Գտնվում է Շիրակի մարզում Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Ջավախքի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերին: Ազգային պարկն զբաղեցնում է մոտ 25 000 հա տարածք: Ազգային պարկն ստեղծվել է Ջավախք-Շիրակ բարձրավանդակի ուրույն կենսաբազմազանության պահպանման համար: Այստեղ է գտնվում հայկական որորի ամենամեծ գաղութը աշխարհում և գանգրափետուր հավալուսնի միակ բնակավայրը Հայաստանում: Տարածքում կան մոտ 670 տեսակի բույսեր՝ (խոլորձ, թրաշուշան, հիրիկ, կակաչ, շուշան), որոնցից 25-ը ներառված են ՀՀ Կարմիր գրքում: Դրանցից 22-ը

էնդեմիկ տեսակներ են: Պարկում կան կաթնասունների 30 տեսակ (եվրոպական ջրասամույր, խայտաքիս և այլն):



4. **Սառնաղբյուրի աղբյուրներ**, **Թադևոս Առաքյալ եկեղեցի**, **Սուրբ Հակոբ վանք**: Սառնաղբյուր գյուղը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի հարավարևելյան մասում, մարզկենտրոնից 34 կմ հարավ: Գյուղում կա հնավայր, Կալաչի կամ Ղալաչի կոչվող բլրի վրա առկա են բազմաթիվ վկայություններ հնավայրի գոյությունը ապացուցող, սակայն առայժմ այն ոչ մի հնագիտական ուսումնասիրությունների չի ենթարկվել: Գյուղի կենտրոնում են գտնվում սուրբ Թադևոս (1883 թ.), սուրբ Հակոբ (V-VI դարեր) և Սուրբ Կարապետ (1205 թ.) եկեղեցիները: Գյուղի մոտ են գտնվում V-XIII դարերի Հոգեվանքը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ուխտատեղին, իսկ 6 կմ արևելք՝ Սուրբ Ղազար եկեղեցին (V-VI դարեր), «Գնդաքար» (մ.թ.ա. 1-ին հազարամյակ) և «Բերդիկ» (մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակ) ամրոցները: 1883 թվականին կառուցվել է Թադևոս Առաքյալ եկեղեցին, որը այժմ գործող է:

Սառնաղբյուրի աղբյուր



Թադևոս Առաքյալ եկեղեցի **Սուրբ Հակոբ վանք**

5. **Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան**: Մինաս Կարապետի Ավետիսյանը հայ նշանավոր գեղանկարիչ է: 20-րդ դարի երկրորդ կեսի հայ կերպարվեստի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը: Ծնվել է 1928 թվականի հուլիսի 20-ին, Ջաջուռում : Համեմատաբար ուշ է սկսել զբաղվել գեղանկարչությամբ: Մինասը ստեղծել է հայկական գյուղաշխարհն արտացոլող կոմպոզիցիաներ, բնանկարներ, ինչպես նաև դիմանկարներ, նատյուրմորտներ, որմնանկարներ: Մինասի ստեղծագործությունները յուրահատուկ են իրենց գունային ուժեղ հակադրություններով, որոնք արտահայտում են լուսավոր, քնարական տրամադրություններ, երբեմն՝ ողբերգական շեշտերով: Անդրադարձել է նկարչության բոլոր ոլորտներին՝ գեղանկարչություն, գրաֆիկա, որմնանկարչություն, բեմանկարչություն և այլն:

6. **Լմբատավանք**: Լմբատավանքը (ճիշտը՝ *Լմբատ թաղամասի Սուրբ Ստեփանոս եկեղեցի*), հայկական ճարտարապետական մի հուշարձան է, որը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի մոտ, Լմբատ թաղամասում: Արտաքուստ և ներքուստ խաչաձև հատակագծով, տրոմպային փոխանցումով, ութնիստ թմբուկով, գմբեթավոր փոքր կառույց է: Պահպանված արձանագրությունները շինարարության մասին տեղեկություն չեն պարունակում: Ըստ ճարատրապետական վերլուծության՝ VI դար է: Պահպանված հետքերը հիմք են տալիս ենթադրելու, որ արևմտյան թևը շրջապատված է եղել սրահով: Հուշարձանի առանձնահատկություններն են՝ ուղղանկյուն հատակագծով հյուսիսային և հարավային թևերը՝ թաղի փոխարեն ծածկված գմբեթարդով (անցումը իրականացված է երկու շարք տրոմպներով), արևելքում միակ խորանը՝ առանց լուսամուտի (գոյություն ունեցող բացվածքը կատարվել է հետագայում), պայտաձև խարանն ու կամարները: Ըստ արձանագրության, գմբեթը X դարում վերականգնվել է: Ներդաշնակ ծավալներով, դեկորատիվ գեղանկար տարրերով վերձիգ կառույցը ունի զուսպ և խոնարհ կերպար: Խորանում և նրանից աջ ու ձախ մասերին պահպանվել են Լմբատավանքի կառուցման ժամանակակից որմնանկարների մնացորդներ. կենտրոնում եղել է գահակալ Քրիստոսը, շուրջը՝ երկնային ուժերի սիմվոլներ, բոցի լեզուների ֆոնի վրա: Աջ ու ձախ մասերին պատկերված են դեպի խորանի կենտրոնը շարժվող երկու ձիավոր (մեկը Սուրբ Գրիգորն է)՝ ձեռքերին խաչավարդ ցուպով: Որմնանկարները հարթապատկերային են, տեղ-տեղ գրաֆիկական մոտեցումով, կատարված են հյութեղ, մեծ ներդաշնակությամբ:

7. **Ծակ քար**: Հացիկ (Շիրակի մարզ): Հացիկից մոտ 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է «Յոթ եղբայր» մատուռը, իսկ գյուղում կա «Բլուկ» եկեղեցի (1890թ.): 19-րդ դարի վերջում կառուցված «Սուրբ Հակոբ»-ը բազիլիկ եկեղեցի է, որը քանդվել է 1988 թվականի երկրաշարժի ժամանակ: Սրբատաշ քարերով շարված եկեղեցին, թեև վերանորոգվել էր 20-րդ դարում, այժմ (2015թ.) կիսավեր է: Դուռը բացվում է հարավային կողմից: Արևելյան խաչթևում աբսիդն է՝ հյուսիսային կողմի խորանով և մկրտության ավազանով: Այստեղ է եղել 7-րդ դարի եկեղեցին, որի հիմնապատերի վրա սովորական մատուռ են կառուցել՝ այն դարձնելով սրբավայր-ուխտատեղի :Ուխտատեղին «Ծակ քար» անունն է կրում: Նրա մոտ է գտնվում «Յոթ եղբայր» կոչվող գերեզմանը, որը նույնպես սրբավայր է:

«**Ծակ քար**» **Հացիկի եկեղեցին**

8. **Մարմաշենի վանք**: Մարմաշենի վանքը գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի Վահրամաբերդ գյուղի հարավ-արևմտյան մասում՝ Ախուրյան գետի ձախ ափին: Վանքը կազմված է երկու շինությունից, գլխավոր՝ Կաթողիկե և կից փոքր եկեղեցիներից: Գլխավոր եկեղեցին ըստ արձանագրության կառուցել է Վահրամ Պահլավունի հայրենասեր իշխանը 988-1029 թվականներին, երբ դեռ Անին Բագրատունիների ոստանն էր: Այդ մասին է Վահրամ Պահլավունին եկեղեցու պատի վրա թողել է մի ընդարձակ արձանագրություն, որը պահպանվել է մինչ օրս: Սելջուկյան արշավանքներից վանքը զգալի ավերվում է, սակայն 1225 թվականին Վահրամ Պահլավունու թոռներ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայրՂարիբը վերանորոգում են Կաթողիկեն: Կոթողի հիմքում ընկած են հայ

ազգային ճարտարապետությանը տիպիկ կառույցաձևեր՝ սլացիկ սյունախուրձեր, զույգ կիսասյուներ, որմնակամարներ, բազմանիստ թմբուկ, բուրգաձև ծածկ, մանրաքանդակներ, բարելիեֆներ և այլն: Մայր եկեղեցու պատերը և ներսից, և դրսից պատված են սրբատաշ կարմրավուն տուֆով, իսկ հիմքային մասերը շարված են բազալտով: Փոքր հուշարձանախումբը եղել է հայկական կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոն:Վանքն ունեցել է իր ջրմուղը, որի հատվածները հայտնաբերվել են գավթից արևմուտք: Փոքր Մարմաշենը կամ Վերին վանքը Մեծից հյուսիս է, բլրակի վրա: Մարմաշենի վանքը եղել է Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոն, այն հայկական հոգևոր և ճարտարապետության արժեքավոր համալիրներից է:

9. **Մաքսիմ Գորկու Անվան Կենտրոնական Այգի**: Գյումրու Գորկի այգին գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, որտեղ սկսվում է Գայի փողոցը: Սա մի գեղեցիկ, կանաչ, ընդարձակ տարածք է զբոսայգիներով և երեխաների համար խաղային հարմարություններով: Բացի խաղահրապարակներից դուք կարող եք այգում զբոսնելիս տեսնել բազմաթիվ արձաններ և հուշարձաններ: Գեղեցիկ հունական ոճով կառուցված կամարապատ հուշարձանը լավագույն վայրն է լուսանկարվելու համար և հիանալու Մայր Հայաստանի հուշարձանով, որը կանգնեցված է բլրի մոտ: Այս հուշարձանը կառուցվել է քանդակագործ Արա Սարգսյանի, Երեմ Վարդանյանի և ճարտարապետ Ռաֆիկ Եղոյանի կողմից: 1975թ.-ին այն տեղադրվել է քաղաքի հարավ-արևմտյան մասում: Սպիտակ կամարից դուք կարող եք տեսնել «Շիրակ» ֆուտբոլի խաղադաշտը, որը հանդիսանում է տարածաշրջանի պաշտոնական մարզադաշտը և հյուրընկալում է բոլոր խաղերը, որոնք անցկացվում են Շիրակի մարզում:

10. **Կրասարի եռաթռիչք կամուրջ**: Կրասար գյուղից 2 կմ հարավ-արևմուտք Ախուրյան գետի վտակներից մեկի վրա կառուցված է Կրասարի եռաթռիչք կամուրջը (պետ. ցուցիչ՝ 7.58.5): Կամուրջը կառուցված է սև և կարմիր կոպտատաշ տուֆ քարերով, իսկ թռիչքների եզրագոտիները սրբատաշ են: Այն առաջին հերթին արժեքավոր է որպես XIX դ. եռաթռիչք հորինվածքով ինժեներա-ճարտարապետական կառույց: Կրասարի կամուրջն իր տեսքով նման է պատմական Կարս քաղաքի կամրջին: Կրասարի կամրջի կառուցման

վերաբերյալ հավաստի տեղեկություններ կան Ղ. Ալիշանի «Շիրակ» գրքում, որտեղ նշվում է, որ այն կառուցվել է 1873թ. «կիւմրեցի» Ստեփանոս Անանիկյանցի կողմից՝ «արկ վայելուչ կամուրջ եռակամար, սև և կարմիր քարամբք»: Ըստ Ալիշանի՝ ուշագրավ է կամրջի վրա պահպանված հայերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուներով արձանագրությունը:

11. **Աշոցքում անցկացվող դահուկավազքի փառատոն**: Հայաստանի Եվրոպական միության պատվիրակությունը և Հայաստանի դահուկային սպորտի, կազմակերպում են դահուկավազքի փառատոն Շիրակի մարզի Աշոցք գյուղական համայնքում: Փառատոնի շրջանակներում առաջարկվում են դահուկային սպորտով հագեցած հանգստյան օրեր, այդ թվում պրոֆեսիոնալ մարզիչների կողմից տրամադրվող դահուկավազքի վարպետության դասեր, ձմեռային խաղեր և մանկական մրցաշար երեխաների համար, տղամարդկանց (5 կմ) եւ կանանց (2,5 կմ) դահուկային մրցավազք դասական ոճով:

12. Արագածը համարվում է Հայաստանի ամենաբարձր լեռը 4095մ բարձրությամբ և ամենագեղեցիկը Շիրակի մարզի կողմից է երևում: Զբոսաշրջիկները հիմնականում բարձրանում են հարավի անհրապույր կողմից՝ Բյուրականից, քանի որ առկա է մեքենայի ճանապարհ, սակայն Արագածի գագաթներից և ոչ մեկը իր գեղեցկությամբ չի փայլում: Շիրակի մարզի կողմից՝ այսինքն հյուսիսից, Արագած լեռը շատ նման է աշխարհին հայտնի շվեյցարական երկու լեռներին՝ Այգերին և Մատեռհոռնին: Արագածի հյուսիսային կողմում առնվազն 10 քայլարշավային, լեռնադահուկային և լեռնահեծանվային երթուղիներ են առկա, որոնք տարբեր ճանապարհներով տանում են նպատակակետ հանդիսացող հյուսիսային և արևմտյան գագաթներ: Արագածի հյուսիսային և արևմտյան գագաթները ամենագրավիչն ու ամենաբարձրն են:Հյուսիսային գագաթ հասնելու համար ամենակարճ ու օպտիմալճանապարհը հյուսիսային կողմից է, քանի որ շրջանցում ենք խառնարանը և ազատվում մի քանի անգամյա վերելք-վայրէջք

տարբերակից: Լեռնադահուկային տուրերի համար ամենաերկարատև սեզոնն է հանդիսանում Արագած լեռան հյուսիսային երթուղին, նոյեմբերից մինչև հունիսի 15, ինչը կարելի է համարել Շիրակի և Հայաստանի ձմեռային տուրիզմի ապագան:

13. **Քարավանատուն** (**Ջրափի**): Քարավանատունը 10-11 դդ. կառույց է և պատկանում է միադահլիճ-եռանավ կամարակապ տիպին: Կառուցված է հիմնովին սև սրբատաշ տուֆաքարերից, կրաշաղախով, իսկ հատակը՝ քարե սալիկներով: Այն ընդերկայնական առանցքով ուղղված է հյուսիսից հարավ: Ներքին Ջրափիի քարավանատան պահպանված մասը եռանավ դահլիճ է՝ 31 մ ընդհանուր երկարությամբ և 13.65 մ լայնությամբ: Ըստ երկայնքի՝ երկու շարքով տեղադրված են եղել 8-ական հաստահեղույս մույթեր, որոնք դահլիճը բաժանում են 3 նավի և միացված են իրար կամարներով: Քարավանատունը կառուցվել է Վրաստանից և Հայաստանի հյուսիսային գավառներից դեպի Անի տանող գլխավոր ճանապարհի վրա: Այս քարավանատունը Ախուրյանի վրա ձգված հանրահայտ Չրփլիի կամուրջի հետ միասին, որ սպասարկում էր հին առևտրական ճանապարհը, անտարակույս միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության առաջնակարգ հուշարձաններից է:

14. **Արքայաբլուր ամրոց**: Գուսանագյուղի սահմաններում պահպանվել են նախնադարյան, նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջաններին պատկանող հուշարձաններ: Հնագիտական ուսումնասիրություններն ապացուցել են, որ գյուղը հնում եղել է մեծ ավան: Գուսանագյուղը եղել է նաև հայտնի իշխանանիստ վայր, որի ապացույցն է գյուղի մեջ պահպանված X-XII դդ. ամրոց-դղյակը, որին գյուղացիները անվանում են «Ղուլա»: Գյուղից 0.5 կմ հարավ-արևմուտք՝ մի փոքրիկ ձվաձև բարձունքի վրա պահպանվել է մ.թ.ա. II-I հազարամյակի «Արքայաբլուր» ամրոցը: Բլրի գագաթի եզրերով ձգվում է ոչ մեծ

որձաքարերով, առանց շաղախի շարված երկու և ավելի մետր բարձրությամբ պարսպի հետքեր և մատուռի՝ մինչև այժմ պահպանված մնացորդներ: Գուսանագյուղից 1 կմ դեպի հարավ, «Շահ թափա» դաշտավայրում, պահպանվել է մ.թ.ա. II-I հազարամյակներին վերագրվող ևս մի ամրոց:Բլուրի շրջապարիսպին դուռը հայտնի է հյուսիսային կողմի վրա»: Մյուս՝ մ.թ.ա. II-I հազարամյակի ամրոցը գտնվում է գյուղից դեպի հարավ, 1.5 կմ հեռավորության վրա: Այն հայտնի է «Բերդի յալ» անունով: «Բերդի յալ» ամրոցի պարսպապատերի արտաքին երեսները շարված են անմշակ մեծ որձաքարերով, իսկ միջուկը՝ համեմատաբար փոքր քարերով՝ առանց շաղախի: Պատերի հաստությունը 4-5 մետր է: Հարավային բերդապատը դրսի կողմից ունի ուղղանկյուն ելուստներ: Ամրոցի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, ենթադրվում է, որ այն կառուցվել է ուրարտական շրջանում, սակայն անվիճելի է, որ այն իր գոյությունը շարունակել է հետագա պատմական ժամանակահատվածում ևս: Ամրոցի շրջակայքում պահպանված պարիսպները տեղ-տեղ հասնում են 1-1.5 մ բարձրության, իսկ ներսում նկատվում են ուղղանկյուն և աղավաղված հատակագծերով կառույցների ավերակներ:

15. **Շիրակի մարզի Սպանդարյան (Ղուլիջան) գյուղի «Կուլիանի» երկրագիտական թանգարանը և Ուրարտական սեպագիր արձանագրությունը**: Շիրակի մարզի Սպանդարյանի «Կուլիանի» երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 2017 թվականի մարտի 25-ին: Այն ունի իր բաժինները. հնագույն-հին դարերի բաժին՝բրոնզի դարի և ուրարտական շրջանի գտածոներ, զարդեր, զենքեր, կենցաղային իրեր և թագավորական խորհրդանշաններ: Նոր դարաշրջանը ներկայացնող բաժին. 1830թ մինչև 1920թ. բազմաթիվ գտածոներ և փաստաթղթեր, խորհրդային շրջանը և Երրորդ Հանրապետության բաժին, գյուղի միջնակարգ դպրոցի, ազգագրության և կիրառական արվեստի ու արխիվային փաստաթղթերի բաժիններ: Թանգարանն ունի բազմաթիվ այցելուներ ՀՀ-ից և արտերկրից՝ գիտնականներ, ուսուցիչներ, աշակերտներ և մշակութասեր հանրության այլ ներկայացուցիչներ: Իսկ գյուղի ամենարժեքավոր գտածոն և այցեքարտը Արգիշտի 1-ինի թողած ուրարտական սեպագիր արձանագրությունն է: Վերջինս վկայում են այն մասին, որ գյուղը բնակավայր է եղել նաև մինչ ուրարտական և ուրարտական շրջանում: Սեպագիր արձանագրությունը Արգիշտի առաջինը թողել է իր՝ դեպի Շիրակ կատարած արշավանքի ժամանակ ՝ կառավարման երկրորդ տարում՝ այսինքն Ք.Ա 785 թվականին: Արձանագրության տեքստը հետևյալն է. «Ես՝ Արգիշտի արքաս՝

Մենուայի որդին, Խալդ Աստծո օգնությամբ Էրեբունիից արշավեցի Կուլիահինի ցեղի վրա, ճնշեցի ապստամբությունը, հիմնեցի բերդաքաղաք»: Արձանագրությունը գտել է տեղացի Ներսես Հարությունյանը, որի մասին հայտնել է Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանին: Վերջինս էլ հնագետ Ալեքսանդր Երիցյանին: 1884 թվականին առաջին անգամ այն վերծանել է անգլիացի հնագետ Սեյսը և խմբագրվել է «Արարատ» ամսագրում: Հետագայում շատ արշավախմբեր ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից ուսումնասիրել են արձանագրությունը: Նիկողայոս Ադոնցը կազմել է ուրարտական արձանագրությունների ցանկը, որտեղ Ղուլիջանի արձանագրությունը 17-րդ տեղում է, տեքստը համառոտ է. «Ես՝ Արգիշտի թագավորս, գրավեցի Կուլիահինի երկիրը, Ալրուբանի քաղաքը»:



16. **Սև Բերդ**: Սև բերդ, հուշարձան ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: 1834 թվականին կառուցված ամրոց է: Անիի ստորգետնյա կառույցների նման Սև բերդի համար էլ ստորգետնյա ուղիներ են կառուցել և բերդից ճանապարհներ են եղել դեպի ներկայիս Մայր Հայաստան հուշարձանը և Կարմիր բերդը: Ընդգրկված է Գյումրիի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Պեղումների արդյունքում պարզվել է, որ այն քաղաքի ամենահնագույն բնակելի հատվածն է: Առաջին ուսումնասիրություններն այստեղ կատարվել են XIX դարի երկրորդ կեսին՝ մոտ 1875 թվականին: Հետագայում՝ 1900 թվականին Սև «ղուլի» տակ պեղումներ է կատարել գերմանացի հնագետ Գեոսները, 1907-1908 թվականներին՝ Խառատյանցը: Պեղումներ իրականացրել է նաև «Կումայրի» արգելոց-թանգարանի արշավախումբը: Պեղումների արդյունքում գտնվել են մի փոքր բնակավայր, սրբատեղիով, փոքր արձան, ցլիկ, անտիկ ժամանակշջանի դամբարանադաշտ:

17. **Պայտաձև ամրոց**:
Պայտաձև ամրոցի Երկու բերդերից և ոչ մեկը ռազմական գործողություններին չեն մասնակցել, այլ լոկ ծառայել են թշնամուն սաստելու համար: Պայտաձև ամրոցը կառուցվել է 1800-ականներին, ռուսական կայսրության կողմից, որն իրեն կից երկու փոքրիկ բերդաձև կառույցներ ունի: Բերդն ունի նաև փակ մուտքեր, գետնուղի թունելներ: Այստեղ առկա է կառուցված թեք թունել, որն փակված է քարերով:

18. **Սբ. Նշան եկեղեցի**: Սբ. Նշան եկեղեցին կառուցվել է Ղահրաման Արղունթյանց կառավարչի և Ալեքսանդրապոլցիների կողմից 1859-1864թթ.: Եկեղեցին անվանվել է Սբ. Նշան 1870թ-ին: Այս մասին է ասում եկեղեցու հարավային և հյուսիսային մուտքերի վերնամասում փորագրված գրությունը: Սա հայկական ավանդական եկեղեցի է՝ կենտրոնցված գմբեթով և զանգակատնով: Խորհրդային տարիներին եկեղեցին չի գործել և ծառայել է որպես պահոց, իսկ հետո թատրոն: Եկեղեցին շատ է տուժել 1988թ-ի ավերիչ երկրաշարժից, հատկապես ավերվել էին գմբեթն ու զանգակատունը: Այն վերանորոգվել է Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի միջոցներով: Խորհրդային տարիներին վանքը վերածվել է աստղադիտարանի, որի բացմանը ներկա է եղել Վիկտոր Համբարձումյանը:

19. **Ամենափրկիչ եկեղեցի**: Ամենափրկիչ եկեղեցին 19-րդ դարի գմբեթավոր, բազիլիկ ոճով կառուցված եկեղեցի է Գյումրիում: Այն գտնվում է Վարդանանց հրապարակի հարավային մասում՝ Գյումրու կենտրոնում: 1850-ականներին հայկական կաթոլիկ և հունական ուղղափառ եկեղեցիներ են կառուցվել Ալեքսանդրապոլ-Գյումրիի կենտրոնում: Վիրավորվելով այս փաստից հայ Առաքելական եկեղեցու նվիրյալները (ովքեր մեծամասնություն են կազմում քաղաքի բնակչության մեջ) որոշում են կառուցել նոր եկեղեցի 2 եկեղեցիների մեջտեղում, որը կլիներ ավելի մեծ և ավելի տպավորիչ: Կառուցումը սկսվել է 1858-1872թթ.: Եկեղեցին կառուցվել է Անիի Մայր Տաճարի

ճարտարապետության նմանությամբ: Այնուամենայնիվ Ամենափրկիչը ավելի մեծ է Անիի Մայր տաճարից: Ճարտարապետը վարպետների վարպետ հայտնի Թադևոս Անտիկյանն է: Մարդիկ պատմում են, որ Թադևոսը ամեն օր կառքով գնացել է Անիի՝ Կաթողիկե տաճարը տեսնելու և երեկոյան վերադառնալով՝ փորձել է նման կերպ կառուցել Ամենափրկիչ եկեղեցին: 1930թ.-ի սկզբին եկեղեցին գրավվել է խորհրդային կառավարության կողմից և ավիրվել է 1932թ.-ին: Ավելի ուշ 1964թ.-ին զանգակատունը վերակառուցվեց: Խորհրդային կառավարության իշխանության ժամանակ, եկեղեցին օգտագործվում էր որպես թանգարան, ավելի ուշ որպես դասակն երաժշտության համերգասրահ: 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից հետո Ամենափրկիչ եկեղեցին ամբողջությամբ վնասվել է և 2002թ.-ից գտնվում է վերականգնման աշխատանքի ընթացքի մեջ: Վերականգնումը իր վերջանական փուլում է, բայց բաց է այցելուների համար:

20. **Սուրբ Աստվածածին եկեղեցի**: Եկեղեցին, որը հայտնի է նաև որպես Յոթ Վերք ի պատիվ Մարիամ Աստվածածնի, 19-րդ դարում կառուցված եկեղեցիներից է: Գտնվում է Վարդանանց հրապարակի հյուսիսային կողմում և Հայ Առաքելական եկեղեցին Շիրակի Թեմի առաջնորդանիստն է: Սուրբ Աստվածածին եկեղեցին արտաքուստ ուղղանկյունաձև, իսկ ներքուստ խաչաձև գմբեթավոր շինություն է: Զանգակատունը գտնվում է հիմնական մուտքի վերևում՝ կառույցի արևմտյան կողմում: Եկեղեցու կառուցումն ունի հետաքրքիր պատմություն: Մարիամ Աստվածածնի նկարը երկար ժամանակ պահվել է Ալեքսանդրապոլում: 1860թ-ի վերջին Էջմիածնի սուրբ հայրերը որոշում են նկարը տեղափոխել քաղաքից դուրս: Մարդիկ, ովքեր շատ էին կապվել այդ եկեղեցու արժեքների հետ, չեն համաձայնվում որոշման հետ և ըմբոստանում են: Երկար բանակցություններից հետո որոշվում է նկարը տեղափոխել Ալեքսանդրապոլ, միայն եթե նոր եկեղեցին կառուցվի նկարը պահպանելով: Ալեքսանդրապոլի բնակիչները կառուցեցին նոր եկեղեցի և անվանեցին Սուրբ Աստվածածին: Եկեղեցին գործել է նաև խորհրդային տարներին: Դա եղել է միակ կրոնական ծիսակատարություններ մատուցող եկեղեցին խորհրդային տարիներին: Ոչ միայն գյումրեցիները, նաև շատ մարդիկ Ախալքալաքից և Ախալցխայից գալիս էին այստեղ կրոնական ծիսակատարությունների: 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից հետո 2 գմբեթներ ընկել են և փոխարինվել նորով: Ընկած գմբեթները գտնվում են եկեղեցու բակում:



21. **Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի**: Սբ. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին տեղակայված է Ռուստավելի և Ջիվանի փողոցների խաչմերուկում: Հին եկեղեցին կառուցվել է դեռևս Ալեքսանդրապոլի ժամանակներում և ունի կառուցման հետաքրքիր պատմություն: Կառուցվել է 1862թ.-ին և կոչվել է «Գեղցոնց ժամ»: Եկեղեցուն նման անուն տալը պայմանավորված էր ոչ թե նրանով, որ եկեղեցի հաճախող մարդկանց մեծ մասը գյուղացիներ էին, այլ նրանով, որ եկեղեցու կառուցման ծախսերի մեծ մասը հավաքվել է և տրվել է գյուղացիների կողմից: Նրանց եկեղեցին կառուցել են իրենց ճաշակով՝ առանց հայկական եկեղեցական ճարտարապետության համաչափությունները հաշվի առնելու: Եվ այդպես դատելով եկեղեցու արտաքին տեսքից՝ մարդիկ սկսեցին այն անվանել «Գեղցոնց ժամ»: Եկեղեցուն կից գործել է չորսամյա դպրոց: Սովետական միության տարիներին եկեղեցու գմբեթը քանդել են և եկեղեցին վերածել են ցորենի պահեստի և հանձնվել գարեջրի գործարանին: 1988 թ.-ի Սպիտակի երկրաշարժի պատճառով եկեղեցին խարխլվել է, բայց չի փլվել: 2003 թ.-ին եկեղեցին ինքնափլուզվել է: Կանգուն է մնացել միայն ժամերգության գավիթը: Եկեղեցին վերականգնվել է և գործում է 2015թ.-ից սկսած:

22. **Ռուսական եկեղեցի** (**Պլպլան ժամ**): 1-ին միջնակարգ դպրոցի կառույցով հիանալուց հետո փողոցի վերջում դուք կտեսնեք Ռուսական եկեղեցին և իր գողտրիկ այգին: Ռուսական եկեղեցու առկայությունը հայերի և ռուսների դարավոր բարեկամության և ամուր կապի վառ ապացույցն է: Եկեղեցին կառուցված է քաղաքի հարավային մասում: Այստեղ է գտնվում հին գերեզմանատունը, որը կոչվում է Պատվո բլուր: Մինչև 19-րդ դարի սկզբները

այս բլուրը օգտագործվել է որպես քրիստոնեական գերեզմանատուն, որտեղ թաղվում էին զինվորականները: Ըստ ռուսական հուղարկավորության ծեսի՝ հանգուցյալի դիակը պետք է տեղադրվի եկեղեցում: Այս եկեղեցին փոքրիկ դասական ռուսական եկեղեցու վառ օրինակ է կառուցված հայկական սև տուֆից և կրում է Սուրբ Միքայել Արխիստրատիգ անունը: Տանիքի թիթեղյա նյութի պատճառով մարդիկ սովորաբար օգտագործում են պլպլան բառը (նշանակում է փայլում կամ փայլուն), նկարագրելու եկեղեցին: Խորհրդային տարիներին եկեղեցին ծառայել է որպես պահեստ:Այս վայրն եզակի հուշարձան է 19-րդ և 20-րդ դարերի հայկական և ռուսական պատմության, երբ Ալեքսանդրապոլը կարևոր քաղաք էր ռուսական կայսրության համար և կրել է ռուսական ազդեցություն բոլոր հնարավոր ոլորտներում:

23. **Հովհաննես Շիրազի տուն-թանգարան**: Հովհաննես Շիրազը հայ հայտնի բանաստեղծ է, ով ծնվել է Գյումրիում: Նրա առաջին աշխատությունը՝ «Աշնան սկիզբ» հրատարակվել է 1935թ-ին: Նովելագիր Ատրպետը տաղանդավոր պոետին տվել է «Շիրազ» գրական անունը, որովհետև «Այս երիտասարդի բանաստեղծությունները Շիրազի թարմ և ցողով ծածկված վարդերի բուրմունքն ունեն»: Նրա տուն-թանգարանը գտնվում է Շահումյան փողոցում, որի այդ հատվածն անվանվել է Վարպետաց: Տունը կառուցվել է 1883թ-ին Ալեքսանդրապոլցի Քեշիշյանի կողմից: Արևմտյան ճակատն ունի շքեղ դարպաս, որը Ձեզ կտանի դեպի ներսի բակ: Խորհրդային հեղափոխությունից հետո տունն ազգայնացվել է և օգտագործել որպես բնակելի տուն: Նկուղն գործել է որպես արտադրական դահլիճ: 1980-ական թթ. բնակիչները տեղափոխվում են կառույցից և 2003թ-ին պաշտոնապես բացվում է Հովհաննես Շիրազի տուն-թանգարանը: Տունը բանատեղծին ներկայացվել է ավելի ուշ՝ 1983թ-ին, ցավոք բանաստեղծը այնտեղ մեկ տարուց էլ քիչ է ապրել, քանի որ մահացել է 1984թ-ին:

24. **Ասլամազյան քույրերի պատկերասրահ**: Աբովյան փողոցով զբոսնելիս նայեք աջ և կտեսնեք Գյումրի քաղաքի ամենահետաքրքիր պատկերասրահներից մեկը: Աբովյան 232 հասցեում դուք կգտնեք Մարիամ և Երանուհի Ասլամազյան Քույրերի պատկերասրահը: Սա սև տուֆից կառուցված կառույց է , որի դռները բացվում են դեպի ծաղկազարդ այգու շքամուտք երկու կողմերից, բնորոշող գեղեցիկ փայտե աղյուսագործ աշխատանքները, որը կառուցվել է 1880-1900թթ.: Սկզբում այն օգտագործվել է որպես բնակելի տուն, հետո՝ 1987թ-ին , այն վերանորոգվել է և բացվել է Մարիամ ու Երանուհի Ասլամազյան Քույրերի Պատկերասրահը: Կառույցը տուժել է 1988թ-ի ավերիչ երկրաշարժից , բայց 2003թ-ին վերակառուցվել է «Լույս» հիմնադրամի միջոցով: Մարիամ Ասլամազյանի 70-ամյակի առթիվ Մարիամ և Երանուհի Ասլամազյաններն ավելի քան 620 օրիգինալ աշխատանքներ են ներկայացրել Գյումրի համայնքից: Նկարչուհի քույրերն ավարտել են Լենինգրադի Արվեստի ինստիտուտը և ունեն նկարչական մեծ պաշար: Պատկերասրահի առաջին հարկում ցուցադրված է Երանուհու աշխատանքները, իսկ երկրորդ հարկում՝ Մարիամի: Բացի նկարներից պատկերասրահում ցուցադրված են , կերամիկական ափսեները՝ պատրաստված Մարիամ Ասլամազյանի կողմից, և Երանուհու՝ խեցեգործական աշխատանքները: Մարիամ Ասլամազյանի որոշ աշխատանքներ պահվում են Տրետյակով պատկերասրահում, ներառյալ՝ «Հայկական կենցաղ» (1955) և «Կարմիր կակտուս ծաղիկ»:

25. **Ձիթողցոնց տուն-թանգարան** (**Քաղաքային կենցաղի և ազգային ճարատարապետության թանգարան**) **Գյումրիում**: Ժամանակին Գյումրեցի հարուստ վաճառականի տունն այսօր դարձել է ամենագրավիչ և ամենաշատ այցելվող թանգարանը Գյումրիում: Թանգարանը հին առանձնատուն է, տների հավաքածու, որը կապ ունի և՛ Գյումրիի պատմության, և՛ ամենօրյա կյանքի հետ, ինչպես նաև տեղական մշակույթի և քաղաքի ճարտարապետական առանձնահատկությունների հետ: Հայտնի տունը կառուցվել է հարուստ առևտրական Պետրոս Ձիթողցյանի կողմից 1872 թ-ին: 4 եղբայրները ծագումով Արևմտյանի Հայաստանի Ձիթող գյուղից գաղթել են Ալեքսանդրապոլ: Այն կառուցվել է Շիրակի հայտնի կարմիր տուֆից: Ճարտարապետը եկել է եզրահանգման կառուցել տունը թեքության վրա: Արևելյան մասը մեկ հարկանի է, իսկ արևմտյան մասը՝ երկու: Շենքը չի ենթարկվել նույնիսկ փոքրիկ վնասվածքների 1926 և 1988թթ. երկրաշարժերից: Խորհրդային իշխանության օրոք առանձնատունը ծառայել է հանրային նպատակներով, և երկար ժամանակ մինչև 1980 թ.-ը, ավելի քան 20 ընտանիք ապրել են այստեղ: 1984 թ.-ին Գյումրու քաղաքային կենցաղի և ազգային ճարատարապետության թանգարան է ստեղծվել և տեղակայվել շենքում: Էքսկուրսիան դեպի թանգարան կներկայացնի ձեզ Գյումրեցիների հպարտ անցյալը: Արժե տեսնել կամարակապ ներքին առաստաղները, ավանդական գորգերն ու այլ զարդարանքներ: Թանգարանը բաժանված է 2 մասի. առաջին հարկում ներկայացված են հայտնի մարդկանց լուսանկարները: Նրանց մեջ են Մարգարետ Թեթչերի, Ռոնալդ Ռեյգանի և Ժակ Կուստոյի նկարները: Դուք կարող եք նաև տեսնել Ձիթողցյանների սենյակների կահույքները՝ դաշնամուրը, որը բերված է Իտալիայից և կահույքի մնացած մասը, որոնք բերվել են Ռուսաստանից և Եվրոպայից: Զարմանալիորեն հարուստ է ցուցադրությունը , որում կարևորվում է տեղի վարպետների վարպետությունը: Հավաքածուն ներառում է ժամանակակից արվեստի ստեղծագործություններ, գորգեր և ձեռագործ իրեր Գյումրուց: Երկրորդ սենյակում ցուցադրված է 19-րդ դարի՝ հին Գյումրիի լուսանկարներն ու Ալեքսանդրապոլի քարտեզները: Սենյակի պատն ունի հետաքրքիր բանալիներով դասավորություն, ինչպես նաև հին քաղաքի դիորամա:

26. **Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան**: Հաջորդ վայրը Ավետիք Իսահակյանի՝ հայ նշանավոր բանաստեղծի տուն-թանգարանն է: Իսահակյանը ծնվել է Ալեքսանդրպոլում 1875թ-ին: Նա սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, հետո Լայպցիգի համալսարանում, որտեղ ուսումնասիրել է փիլիսոփայություն և մարդաբանություն: Ավետիք Իսահակյանի աշխատություններից ամենահայտնիներն են՝ «Երգեր և վերքեր», «Աբու Լալա

Մահարի» ստեղծագործությունները: Իսահակյանի ստեղծագործություններից շատերը թարգմանվել են տարբեր լեզուներով, իսկ պոեմներն օգտագործվել են որպես երգերի բառեր: Նրա տուն-թանգարանը գտնվում է Վարպետաց 91 փողոցում: Տունը կառուցվել է 1829թ-ին բանաստեղծի հոր կողմից: 2002թ-ի հոկտեմբերին տուն-թանգարանը վերակոռուցվել և վերաբացվել է Հայաստանի կառավարության և Գյումրու քաղաքապետարանի միջոցներով: Տուն-տանգարանը կահավորված է այնպես, ինչպես Իսահակյանի ապրած ժամանակ: Դուք կարող եք շրջել թանգարանում տեղի էքսկուրսավարի օգնությամբ:

27. **Միեր Մկրտչյանի հուշատուն-թանգարան**: Այս տարածքում երրորդ թանգարանը հայ նշանավոր դերասան Միեր Մկրտչյանի հուշատուն-թանգարանն է : Նա ծնվել է 1930թ-ին Լենինականում: Նա հռչակավոր հայ դերասաններից է, ով խաղացել է և կինոյում, և թատրոնում: Նրա մասնակցությամբ ֆիլմերի մեծամասնությունը նկարահանվել է Լենինականում, օրինակ «Մեր մանկության տանգո»-ն, որի ռեժիսորը իր եղբայր Ալբերտ Մկրտչյանն էր: Միեր Մկրտչյանի հուշատուն-թանգարանը գտնվում է Ռուսթավելի փողոցում, որը 20-րդ դարի կառույց է, պատրաստված սև տուֆից: 20-րդ դարի առաջին կեսին այն օգտագործվել է որպես բնակելի տուն, իսկ խորհրդային հեղափոխությունից հետո կառույցն ազգայնացվել է և տարբեր գործունեություններ կատարել: 1988թ-ի ավերիչ երկրաշարժից հետո այն ավերվել է: Ռուսթավելի փողոցը մասամբ վերակառուցվել է և 2004թ-ին բացվել է թանգարանը, մինչդեռ պաշտոնական բացումը եղել է 2006թ-ին: Թանգարանն ընդգրկում է մեծ դերասանի կյանքի և կարիերայի իրադարձությունները խորհրդանշող իրեր:

28. **Չերքեզի ձոր**: Չերքեզի ձոր ռեստորանը ստեղծվել է 1997թ-ին, և աշխատում է առավել ժամանակակից տեխնոլոգիաներով, ու մասնագիտացված է 4 տեսակի իշխանի և մեկ տեսակի սիբիրյան թառափի բազմացման մեջ: Կարմիր ամրոցն ու հովիտը, որտեղ գտնվում է ձկնաբուծարանը, ունի պատմական կարևոր նշանակություն: Այս ռեստորանում Դուք կարող եք ինքներդ ձուկ բռնել, որը կպատրաստվի հայկական ավանդական թոնրի մեջ:

29. «**Կումայրի**» **պատմական արգելոց**: «Կումայրի» պետական պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանը հիմնվել է 1980թ. և ընդգրկում է Գյումրի քաղաքի պատմական միջուկը: Գյումրին (հնում՝ «Կումայրի», նոր ժամանակներում «Գյումրի», ապա ‹‹Ալեքսնդրապոլ» և «Լենինական») Հայաստանի երկրորդ քաղաքն է: Այն հանդիսանում է Շիրակի մարզի մարզկենտրոն: Հնագիտական պեղումներից պարզվել է, որ մ. թ.ա. 3-րդ հազարամյակում եղել է մեծ բնակավայր: Քաղաքի ներկայիս տարածքում հայտնաբերված են քարե դարի մարդու բազմաթիվ կացարաններ, դամբարանադաշտեր, որոնց մեջ հատուկ ուշադրության է արժան «Կումայրի» հնագույն բնակատեղին: Գյումրու սիրտը համարվող «Կումայրի» պատմական, ճարտարապետական արգելոց-թանգարանը հիմնվել է 1980թ-ին եւ ընդգրկում է քաղաքի պատական միջուկը: Սա թանգարան է բաց երկնքի տակ, որտեղ մշակութային արժեք են ոչ միայն շենք-շինությունները, այլեւ փողոցները: «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանն ընդգրկում է ավելի քան 1000 հա տարածք՝ ներառելով մոտ 1600 հուշարձան: Թանգարանի տարածք այցելողներին գրավում են ոչ միայն 100-ամյա շինություններն, այլեւ կոպտավուն սալաքարերով ծածկված փողոցները, որոնք արգելոցի այցեքարտն են: Այստեղ ցանկացած փողոցաշինական կամ շինությունների վերականգնման աշխատանքներ իրականացնելու համար հարկ է ստանալ մշակույթի նախարարության թույլտվությունը. կարգը խախտողները տուգանվում են: Շրջելով թանգարանի տարածքի փողոցներում՝ կարելի է նկատել 19-րդ դարավերջի 20-րդ դարասկզբի դրոշմը կրող շատ տներ:



30. **Խեցեգործության դպրոց**: Դուք կարող եք գտնել խեցեգործության դպրոցը Շահումյան փողոցում, նույն կառույցի շարունակությունը Միեր Մկրտչյանի տուն-թանգարանն է: Կառույցի այս հատվածը վերակառուցվել է Անտոնիո Մոնտալտոյի՝ Հայաստանում Իտալիայի պատվավոր խորհրդականի միջոցով: Այստեղ ուսուցանում են խեցեգործության վարպետներ, պատրաստելու գեղեցիկ ձեռագործ հուշանվերներ, որոնք հիանալի նվերներ են Գյումրիից Ձեզ հետ տանելու համար: Անպայման ներս մտեք և գնահատեք ձեռագործ հուշանվերների պատրաստման գործընթացը: